



Վանաձորի Օրհուս բնապահպանական տեղեկատվական կենտրոնի

2016 թ դեկտեմբերի

գործունեության հաշվետվություն

ք Վանաձոր

2016թ, դեկտեմբերի 22

Վանաձորի Օրհուս կենտրոնի գործունեության նպատակն է բարձրացնել տեղական կարողությունները բնապահպանական կառավարման հարցերի վերաբերյալ, ամրապնդել քաղաքապետարանի Տարեկան ծրագիրը և իրականացնել տեղական քաղաքացիական հասարակության և ոչ կառավարական շահագրգիռ կողմերի մասնակցությունը:

Վանաձորի Օրհուս կենտրոնի կողմից վերը նշված նպատակներին հասնելու ուղղությամբ 2016թ դեկտեմբեր ամսվա ընթացքում իրականացվել է հետևյալ գործունեությունը:

2016թ. դեկտեմբերի 2-ին կենտրոնի համակարգողը մասնակցել է Երևանում տեղի ունեցած <<Օրհուսի կոնվենցիայի հիմնադրույթների արտացոլումն ազգային օրենսդրությունում, Շրջակա միջավայրի հարցերով արդարադատության մատչելիություն>> աշխատաժողովին: Աշխատաժողովին իրականացվեց Տնտեսական և իրավական հետազոտությունների կենտրոն ՀԿ կողմից՝ ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ:

2016թ. դեկտեմբերի 12-ին կենտրոնի համակարգողը մասնակցել է ՀՀ բնապահպանության նախարարության, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի և ԵՊՀ-ում գործող Կայուն զարգացման կենտրոնի կողմից կազմակերպված աշխատաժողովին, որը կրում է «Էկոլոգիական քաղաքականության բարելավման և կանաչ տնտեսության զարգացման խնդիրները հանքային և ջրային ռեսուրսների շահագործման ոլորտում» խորագիրը:

Աշխատաժողովի նպատակն է կողմերի համագործակցության շրջանակների քննարկումը, բնական ռեսուրսների (հանքային և ջրային պաշարների) օգտագործման ոլորտում շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության բարելավման և կանաչ տնտեսության ներդրման հարցերի բարձրացումն ու դրանց լուծման ուղիների պարզաբանումը: Միջոցառումը նպատակ է հետապնդում կլոր սեղանի շուրջ համախմբելու նշված ոլորտի մասնագետներին և շահագրգիռ կողմերին՝ կիսելու իրենց փորձը, բացահայտելու մարտահրավերներն ու առաջնահերթությունները, որոնց առաջիկայում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ոլորտի բարելավման համար:

2016թ. դեկտեմբերի 14-ին E2R2 հիմնադրամի և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից և Վանաձորի Օրհուս կենտրոնի կազմակերպական աջակցությամբ Վանաձորում իրականացվեց էներգաարդյունավետության, լուսավորության, ինովացիոն տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններին նվիրված կլոր սեղան: Կլոր սեղանի նպատակն է մասնակիցներին ներկայացնել Սյունիքի մարզում իրականացված ծրագրերի փորձը:

2016թ. դեկտեմբերի 15-16-ին կենտրոնի համակարգողը մասնակցել է Վանաձոր համայնքի 2017-2022թթ զարգացման ռազմավարական պլանի հանրային լսումներին: Համակարգողը Վանաձորի Օրհուս կենտրոնի կողմից առաջարկեց ստեղծել համայնքային բնապահպանական շրջանառու հիմնադրամ, որը թույլ կտա մշտապես ունենալ միջոցներ՝ բնապահպանական միջոցառումներ իրականացնելու համար և համապատասխան դոնոր կազմակերպությունների հետ համատեղ իրականացնել էներգաարդյունավետության, էներգախնայողության և այլ բնապահպանական ծրագրեր: Ֆոնդի ստեղծումը թույլ կտա իրականացնել բնապահպանական միջոցառումներ՝ առանց քաղաքապետարանի կազմում ծախսատար կառուցվածքային փոփոխություններ իրականացնելու: Վանաձորի օրհուս կենտրոնի կողմից առաջարկվեց նաև նախատեսել տուրիզմի ենթակառուցվածքների՝ մասնավորապես հյուրանոցների կառուցման խթանման գործունեություն իրականացնել, քանի որ համայնքը որպես զարգացման կարևոր ուղղություն ընտրել է տուրիզմի և էկոտուրիզմի զարգացումը:

Պերճ Բոջուկյան

Համակարգող,
Վանաձորի Օրհուս բնապահպանական
ստեղծկատվության կենտրոն